# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ-7/1-12

**ք. Երևան** **29.12.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արեգ Արշակյան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Խ. Գարանյանի ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում (Հավելված N 1) Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայության արդյունքը և վճարել դրա համար (Հավելված N 3):

1.2 Ծառայությունը կմատուցվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում Կատարողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Կատարողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում՝ ընդ որում ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվում է: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարիներին՝ 2015-2017թթ. ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը կլուծվի:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և դրակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 2 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարներն, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը և վճարելու վճարման ենթակա գումարները:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել փոխհատուցել իրեն պատճառված վնասները և վճարելու սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժն, եթե Պատվիրատուն բազմիցս խախտել է ծառայության համար վճարման պայմանները:

**2.4 Կատարողն պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3.Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը Ծառայության մատուցման ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուին կամ Ստացողին է ներկայացնում մատուցված Ծառայության (Ծառայության առանձին փուլի) մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.2.1 Պատվիրատուն (Ստացողը) հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում, Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայության արդյունքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Պատվիրատուի(Ստացողի) կողմից Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու (հաստատելու) պահից:

## 4.Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր վճարները (ծախսերը)՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 67 014 000 /վաթսունյոթ միլիոն տասնչորս հազար/ ՀՀ դրամ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու՝ /Հավելված N 3/ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում, վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրով սահմանված վճարման ժամանակացույցով:

4.3 Սույն պայմանագրով Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

## 5.Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման որակի, օգտագործված նյութերի որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.2 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայության արդյունքը չընդունվելու, ինչպես նաև սույն պայմանագրի N 2 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի չկատարված մասի գնի 0,05%-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ Պայմանագրի չկատարված մասի գնի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. Այլ պայմաններ

7.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը 31.10.2011թ. № ՊՆ 510-1354 գրությամբ նախապես համաձայնեցված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.3 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N3, N4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.9 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արեգ Արշակյան» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 25307000573030010 |
| ՀՎՀՀ 00867415 | ՎՀՀ 00088588 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետ Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Տնօրեն Խ. ԳԱՐԱՆՅԱՆ |

Հավելված N 1
N ՇՀՄԶԲ-7/1-12 ծածկագրով գնման պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայության մատուցման անվանումը | Տեղակայման վայրը | Չ/մ | Ընդհանուր քանակը՝ 2015-2017թթ. համար | Մեկ միավորի գինը ՀՀ դրամ | Ընդհանուր գումարը ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հացաթխման ծառայություն | Բերդ - 51036 գ/մ | կգ | 657 000 | 102 | 67 014 000 | 2015-2017թթ.,պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրով սահմանված գնման ժամանակացույցով |
| Ընդհանուր գումարը | | | | | | 67 014 000 /վաթսունյոթ միլիոն տասնչորս հազար/ ՀՀ դրամ | |

Հավելված N 2
N ՇՀՄԶԲ-7/1-12 ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Ծառայության արդյունքը | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|
| 1 | Հաց կաղապարային | Հաց կաղապարային, 1-ին տեսակի ցորենի ալյուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը 45-47%, թթվայնության աստիճանը՝ 2,5-4,0, քաշը՝ միջինը 700 գր +/- 3% թույլատրելի շեղումով, ծակոտելիությունը՝ 60-65%: Պատրաստի հացի տեղափոխումը զորամասեր իրականացվում է հացի մեքենաներով, հացի տեփուրների վրա հացը մեկ կարգով շարանելով: Անվտանգությունը N2-III4,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |

***Ծանոթություն*** ***Հացի առաքումը զորամասեր իրականացվում է մատակարարի փրանսպորտային միջոցներով՝ ամեն օր: Ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը հացի առաքումը հացաթխումից հետո իրականացվում է 6 ժամից ոչ շուտ, իսկ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը՝ 4 ժամից ոչ շուտ:Տարվա ընթացքում զորամասի մշտական տեղակայման վայրից բացի զորամասի անձնակազմը զորավարժարանում գտնվելու ժամանակ, քաղաքացիական կազմակերպությունը հացի մատակարարումը պետք է իրականացնի զորավարժարան, մինչև 150 կմ հեռավորությամբ:***

### *Հացաթխման ծառայության մատուցման համար տրամադրվող ալյուրի տեխնիկական բնութագիրը*

| Անվանումը | Տեխնիկական բնութագիր |
|---|---|
| 1-ին տեսակի ցորենի ալյուր | ՀՍՏ 280-2007: Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.75%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 30,0%, 50կգ-ոց պոլիէթիլենային պարկերով, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի |

**Ծանոթություն՝**

*Ցուպաքանչյուր ալյուրի պարկերի վրա ներկով, 50-ից 60մմ բարձրությամբ տառերով մակնանշված լինի

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
4. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը

** Պարկերի վրա փակցվող 6 սմ x 8 սմ չափսի կոշտ թղթից պիտակներն ամրակարվում են պարկերի բերանների թելակարման տեղից, որի վրա պետք է պիտակավորված լինի

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Պահպանման ժամկետը
5. Ալյուրի տեղափոխումը կատարվում է հաց արտադրող ձեռնարկության միջոցներով:

*** 1 կգ հացի թխման համար ՊՆ-ի կողմից տրամադրվում է 0,757 կգ առաջին տեսակի ալյուր 14,5% խոնավության նորմաների համաձայն: Մասնակիցների կողմից մինչև 2015թ-ի սեպտեմբեր ամիսը, ալյուրի ստացումը կատարվելու է հատուցման ՀՀ ՊՆ ԹՎ ՊՇ կարգագրերի՝ "Թալգրիկ" ՍՊԸ-ից /ք.Երևան և հարակից մարզեր, Սյունիքի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի տարածաշրջաններ/, իսկ մնացած ամիսներին և տարիներին 2016թ., 2017թ. նոր պայմանագրերի առկայության դեպքում կհատվացվի նոր մատակարարներից:

Հավելված N 3
N ՇՀՄԶԲ-7/1-12 ծածկագրով գնման պայմանագրի

## Վճարման ժամանակացույց

| Անվանումը | |
|---|---|
| հացաթխման ծառայություն | 2015-2017թթ., պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով: |
| | 67 014 000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Բերդի հացի գործարան» ԲԲԸ
Տնօրեն Ս. ԳԱՐԱՆՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀՄՁԲ-7/1-12 ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող
_____
_____
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ_____
_____
հվհհ_____

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները, (այսուհետև՝ ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ ծառայությունները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Ծառայությունների մատուցման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀԾՁԲ-7/1-12 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 23 -ը փետրվարի 2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արեգ Արշակյան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Խ. Գարանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 29.12.2014թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 2 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար (սույն ՀամաձայնագրիN 2 Հավելված):

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 17 841 942 /տասնյոթ միլիոն ութ հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան՝ 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 25.12.2015թ (սույն Համաձայնագրի N 2 Հավելված):

## 3.Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

## 4.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արեգ Արշակյան» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | [illegible]00057930010 |
| ՀՎՀՀ 00867[illegible] | [illegible]0088588 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | Տնօրեն Խ. ԳԱՐԱՆՅԱՆ |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | |

Հավելված N 1
№ ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

## Գնման ժամանակացույց

| Հ/հ | Ծառայության մատուցման անվանումը | Տեղակայման վայրը | Չ/մ | Մեկ միավորի գինը ՀՀ դրամ | 2015թ. | | Ընդհանուր քանակը՝ | Ընդհանուր գումարը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1-ին կիսամյակ | 2-րդ կիսամյակ | | |
| 1 | հացաթխման ծառայություն | Բերդ - 51036 գ/մ | կգ | 102 | 69000 | 105921 | 174921 | 17841942 |
| Ընդհանուր գումարը | 17 841 942 /տասնյոթ միլիոն ութ հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ | | | | | | | |

Հավելված N 2
№ ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

## Վճարման ժամանակացույց

| Հ/հ | Կոդի համարը | Անվանումը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ. քան 25.12.2015թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, |
| 1 | 98391170/1/4/1 | Հացամթերքի թխման ծառայություն | 3519000 | 7038000 | 12439971 | 17841942 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության տեղական-
ՆՏԱ դեպարտամենտի պետ ... ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Արեգ Միշալյան» ՍՊԸ
Տնօրեն ... Ի. ԳԱՐԱՆՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ՇՀԾՁԲ-7/1-12 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 29 -ը հունվարի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արեգ Արշակյան» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Խ. Գարանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 29.12.2014թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 2 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 17 901 000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2016թ (Հավելված N 2):

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արեգ Արշակյան» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն. | «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2530700057930010 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 00088588 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Խ. ԳԱՐԱՆՅԱՆ |

Հավելված N 1

№ ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

## ՀԱՑԱԹԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Տեղակայման վայրը | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայությունների մատուցումը ըստ եռամսյակների 2016թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | Բերդ - 51036 գորամաս | կգ | 175 500 | 102 | 17 901 000 | 54405 | 39488 | 35 100 | 46 507 |
| **Ընդամենը** | 17 901 000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ | | | | | | | | |

Հավելված N 2

№ ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

## ՀԱՑԱԹԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Տեղակայման վայրը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Բերդ - 51036 գորամաս | 5549310 | 5549310 | 5549310 | 9577086 | 9577086 | 9577086 | 13157286 | 13157286 | 13157286 | 17901000 | 17901000 | 17901000 |

CPV-ի կոդը՝ 98391170/1/4/1

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արեգ Արշակյան» ՍՊԸ
Ք. Երևան, Ն. Զարյան 24
«Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 25307000579300 10
ՀՎՀՀ 00088588
տնօրեն

Խ. ԳԱՐԱՆՅԱՆ

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1**
**№ ՇՀԾՁԲ-7/1-12 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 31 -ը մայիսի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մ. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արեգ Արշակյան» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Խ. Գարանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 29.12.2014թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/1-12 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

## 1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով Վաճառողի կամահայտնությունը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում և 29.01.2016թ. կնքված № 2 համաձայնագրի մեջ կատարել կատարողի բանկային վավերապայմանների փոփոխություն՝ «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ի Հ/հ 2530700057930010, փոխարեն հիմք ընդունել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի՝ Հ/հ 2052122104421001:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արեգ Արշակյան» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | Ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ֆինանսների նախարարության | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 2052122104421001 |
| Հ/Հ 900011144079 | ՀՎՀՀ 00088588 |
| ՀՎՀՀ 00867415 | տնօրեն |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | |
| Մ. ՀԱԿՈԲՅԱՆ | Խ. ԳԱՐԱՆՅԱՆ |

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՇՀԾՁԲ-7/1-12 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 20-ը դեկտեմբերի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արեգ Արշակյան» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Խ. Գարանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 29.12.2014թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 2 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **394 842 (երեք հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր քառասուներկու)** ՀՀ դրամ, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2016թ (Հավելված N 2):

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արեգ Արշակյան» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 20521221044210015 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 00088588 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | տնօրեն |
| ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Խ. ԳԱՐԱՆՅԱՆ |

Հ/ա Ն. Կարապետյան

2.1. 000923292

Հավելված N 1

## ՀԱՑԱԹԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Տեղակայման վայրը | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայությունների մատուցումը ըստ եռամսյակների 2016թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 4-րդ եռամսյակ |
| 1 | Բերդ - 51036 գորամաս | կգ | 3871 | 102 | 394 842 | 3871 |
| Ընդամենը | | 394 842 (երեք հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ | | | | |

Հավելված N 2

## ՀԱՑԱԹԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Տեղակայման վայրը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ |
|---|---|---|
| | | դեկտեմբեր |
| 1 | Բերդ - 51036 գորամաս | 394 842 |

CPV-ի կոդը՝ 98391170/1/4/1

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի պ.պ.կ.

Ն. ՄԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արեգ Արշակյան» ՍՊԸ
Ք. Երևան, Ն. Զարյան 24
«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052122104421001
ՀՎՀՀ 00088588
տնօրեն

Ա. ԱՐԱՆՅԱՆ

«ԱՐԵԳ ԱՐՇԱԿՅԱՆ»
"АРЕГ АРШАКЯН"
"AREG ARSHAKYAN"
04036588

Ա.Դ. 00092292

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 4
№ ՇՀԾՁԲ-7/1-12 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30-ը հունվարի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արեգ Արշակյան» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Խ. Գարանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 29.12.2014թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 2 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **13 882 914 (տասներեք միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար ինն հարյուր տասնչորս) ՀՀ դրամ**, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2017թ (Հավելված N 2):

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արեգ Արշակյան» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2052122104421001 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 00088588 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | տնօրեն |
| ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Խ. ԳԱՐԱՆՅԱՆ |

Հավելված N 1
№ ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի N 4 համաձայնագրի

## ՀԱՑԱԹԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Տեղակայման վայրը | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայությունների մատուցումը ըստ եռամսյակների 2017թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | Քերդ - 51036 գորամաս | կգ | 136107 | 102 | 13882914 | 42194 | 30625 | 27222 | 36066 |
| **Ընդամենը** | 13 882 914 (տասներեք միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար ինն հարյուր տասնչորս) ՀՀ դրամ | | | | | | | | |

Հավելված N 2
№ ՇՀԾՁԲ-7/1-12 գնման պայմանագրի N 4 համաձայնագրի

## ՀԱՑԱԹԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Տեղակայման վայրը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2017թ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Քերդ - 51036 գորամաս | 4303788 | 4303788 | 4303788 | 7427538 | 7427538 | 7427538 | 10204182 | 10204182 | 10204182 | 13882914 | 13882914 | 13882914 |

CPV-ի կոդը՝ 98391170/1/4/1

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ-գնումների

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արեգ Արշակյան» ՍՊԸ
Ք. Երևան, Ն. Զարյան 24
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052122104421001
ՀՎՀՀ 00088588
տնօրեն

Խ. ԳԱՐԱՆՅԱՆ

Հ/ա Հ. Գրիգորյան
Հ.Ա. 000923292